2018, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (513)

Բիւզանդա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

28 հունիսի

Էջմիածնի քաղաքապետի պաշտոնակատարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էջմիածնի քաղաքապետի պաշտոնակատար Դիանա Գասպարյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակման առիթով շնորհավորեց քաղաքապետի պաշտոնակատարին եւ վստահություն հայտնեց, որ նա ազգանվեր ծառայությամբ իր ջանքերը կներդնի ի նպաստ քաղաքի բարեկարգման եւ կենսամակարդակի բարձրացման:

Նորին Սրբությունն անդրադարձավ Մայր Աթոռի կողմից իրականացված նախաձեռնություններին, որոնց շնորհիվ քաղաքն ավելի ներկայանալի եւ գրավիչ է դարձել այցելուների համար, ինչպես նաեւ ներկայացրեց ապագա ծրագրերը: Այս առումով Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց գործակցությունը հայոց հոգեւոր կենտրոնի եւ քաղաքապետարանի միջեւ:

Իր հերթին Դիանա Գասպարյանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ընդունելության եւ օրհնության համար՝ ուրախություն արտահայտելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ իր առաջին հանդիպման կապակցությամբ: Քաղաքապետի պաշտոնակատարը նաեւ կարեւորեց Հայ Առաքելական Եկեղեցու, մասնավորապես՝ Մայր Աթոռի կողմից իրականացվող սոցիալական, բարեգործական ու կրթական ծրագրերը: Վերջինս պատրաստակամություն հայտնեց էլ առավել սերտացնելու առկա համագործակցությունը՝ ներդրում ունենալով Մայր Աթոռի հայրենաշեն ծրագրերում:

Զրույցի ընթացքում Գարեգին Բ Հայրապետն ու Դիանա Գասպարյանն անդրադարձան Էջմիածին քաղաքի խնդիրների հաղթահարման ուղղությամբ ձեռնարկվող քայլերին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը:

9 հուլիսի

ԱՄՆ հրեական կոմիտեի միջկրոնական գործերի բաժնի տնօրենին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հրեական կոմիտեի միջկրոնական գործերի բաժնի տնօրեն, Իսրայելի գլխավոր ռաբբինաթի խորհրդական ռաբբի Դեյվիդ Շլոմո Ռոզենին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբան Խաժակ արք. Պարսամյանի եւ ԱՄՆ հայկական միության նախագահ Էնթոնի Պարսամյանի:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրին, կարեւորեց վերջինիս այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որը պիտի նպաստի երկու ժողովուրդների հարաբերությունների առավել սերտացմանը եւ փոխգործակցության զարգացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Իսրայելի գլխավոր ռաբբինաթի հետ եղբայրական հարաբերություններն ունեն հարուստ պատմություն, եւ սույն հանդիպումը Մայր Աթոռում պատշաճ առիթ է՝ կապերի զարգացման նոր հնարավորություններն ուսումնասիրելու համար:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց հայ եւ հրեա ժողովուրդների կապերին, որ գալիս են դեռեւս աստվածաշնչյան ժամանակներից, խոսեց դեռեւս 7-րդ դարում հաստատված Երուսաղեմի Հայոց Պատրիարքության կարեւոր առաքելության մասին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ շեշտեց, որ սփյուռքյան թեմեր իր հովվապետական այցերի ընթացքում բազմիցս ականատես է դարձել հայ եւ հրեա համայնքների եղբայրական ջերմ հարաբերություններին: Ժողովուրդների միջեւ բարեկամական կապերի զորացման գործում կարեւոր համարեց նաեւ Հայաստանի հրեական համայնքի դերակատարությունը:

Երկկողմ օրակարգը, Գարեգին Բ Վեհափառի հավաստմամբ, բավականին հարուստ է եւ ի շարս այլ հարցերի՝ ընդգրկում է Իսրայելի պետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ Ադրբեջանին ռազմամթերքի վաճառքի խնդիրները, որոնց Մայր Աթոռը կենսական կարեւորություն է տալիս:

Իր հերթին ռաբբի Դեյվիդ Շլոմո Ռոզենը նշեց, որ երկու երկրների հոգեւոր առաջնորդների գործակցությունը կարող է լավագույն միջոցը դառնալ երկու ժողովուրդների առջեւ ծառացած մարտահրավերների լուծման գործում:

Վեհափառ Հայրապետը եւ ռաբբի Ռոզենը համակարծիք էին, որ երկկողմ օրակարգում առկա բոլոր հարցերն ավելի հեշտ կլինի քննարկել հարաբերությունների զարգացման, միջկրոնական երկխոսության համար նոր ձեւաչափեր ստեղծելու պարագայում:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

11 հուլիսի

Պապական նվիրակին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պապական նվիրակ եւ Աեոմոնայի տիտղոսակիր արքեպիսկոպոս Խոսե Ավելինո Բետտանկուռին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով պապական նվիրակին, շնորհավորեց վերջինիս նշանակման առիթով եւ մաղթեց արդյունավոր գործունեություն:

Վեհափառ հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ իր գահակալության շրջանում Հայոց Եկեղեցու եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու միջեւ հարաբերություններն առավել ջերմացել են ու զորացել: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Հռոմի Հովհաննես-Պողոս Բ եւ Ֆրանցիսկոս Սրբազան Քահանայապետերի այցելություններին Հայաստան, որոնք վկայում են քրիստոնեությունն իբրեւ պետական կրոն առաջինն ընդունած ժողովրդի հանդեպ ջերմ սիրո մասին:

Գարեգին Բ Կաթողիկոսը հույս հայտնեց, որ նորանշանակ պապական նվիրակը եւս աշխույժ ջանքեր կգործադրի երկու Եկեղեցիների բարեկամական կապերն առավել ամրապնդելու ուղղությամբ:

Իր հերթին Խոսե արքեպիսկոպոս Ավելինո Բետտանկուռը խորին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ առավելագույն չափով ամեն ջանք ու ճիգ կներդնի երկու Աթոռներին օգտակար ծառայություն բերելու համար: Պապական նվիրակը նաեւ Սրբազան Քահանայապետի սերն ու զորակցությունը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին ու նրա գահակալին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց արդի մարտահրավերներին եւ դրանց հաղթահարմանն ուղղված ուղիներին:

Վերջում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց պապական նվիրակին՝ մաղթելով Աստծո օգնականությունն իր սրբազան առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Շահե ծ. վրդ. Անանյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը հայագիտական միջազգային գիտաժողովին

Հունիսի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում ակադեմիկոս Լեւոն Խաչիկյանի ծննդյան 100-րդ տարեդարձի առիթով կազմակերպված հայագիտական միջազգային գիտաժողովի մասնակիցներին փոխանցեց Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը, որում ասվում է.

«Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ողջունում ենք Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հիմնադիր տնօրեն, ակադեմիկոս, բարեհիշատակ Լեւոն Խաչիկյանի ծննդյան 100-րդ տարեդարձի առիթով Հայագիտական միջազգային գիտաժողովի կազմակերպումը՝ նվիրված միջնադարյան Հայաստանի պատմությանն ու մշակույթին, հայկական ձեռագրական ժառանգությանը:

Մեր երկրի ու ժողովրդի կյանքում արդյունաշատ վաստակ ունի անվանի հայագետ, ակադեմիկոս Լեւոն Խաչիկյանը: Որպես Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հիմնադիր տնօրեն՝ նա իր ողջ կյանքը նվիրեց Մատենադարանի արդյունավոր գործունեությանը, որտեղ խորհրդային տարիներին տեղափոխվեցին մեր վանքերի լուսավոր հարկերի ներքո դարերի վեր ստեղծված ու խնամքով պահպանված ձեռագիր մատյանները: Վաստակաշատ ակադեմիկոսի ղեկավարության ներքո Մատենադարանը կարճ ժամանակում դարձավ գիտական հզոր կենտրոն, որը մեծ ճանաչում ձեռք բերեց նաեւ Հայաստանից դուրս: Մատենադարանի հարկի ներքո համախմբվեցին գիտության բազում նվիրյալներ, ովքեր իրենց անդուլ, քրտնաջան աշխատանքով նոր զարգացում պարգեւեցին հայագիտությանը՝ իր բոլոր ճյուղերով ու ոլորտներով:

Պահպանվող հոգեւոր գանձերով՝ Մատենադարանը եղել եւ շարունակում է հարազատորեն կապված մնալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, եւ այսօր առանձնակի գնահատանքով ենք անդրադառնում, որ տակավին Լեւոն Խաչիկյանի ղեկավարության տարիներից ձեւավորվել է սերտ համագործակցություն Մատենադարանի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեւ՝ ի նպաստ հայ գիտության զարգացման:

Մեծ ու գնահատարժան է նաեւ Լեւոն Խաչիկյանի գիտական ժառանգությունը: Մայր Հայրենիքում ու նրա սահմաններից հեռու լայնորեն ծանոթ են նրա գրքերն ու ուսումնասիրությունները, որոնք լույս են սփռում մեր ժողովրդի պատմության էջերին: Նա կարեւոր մասնակցություն բերեց Հայկական հանրագիտարանի եւ «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի կազմման, մեծաթիվ մատենաշարերի խմբագրման ու հրատարակության գործում: Նրա վաստակը արժանապես գնահատված է գիտական ամենաբարձր կոչումներով ու պարգեւներով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում գիտաժողովի կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին՝ մաղթելով ստեղծագործական նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ՝ ի նպաստ հայ գիտական մտքի զարգացման ու առաջընթացի:

Բարի ընթացք ու հաջողություններ գիտաժողովի աշխատանքներին»:

Հոգեհանգիստ Գարեգին Ա Հայրապետի հոգու խաղաղության համար

Հուլիսի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցվեց Պատարագ:

Սրբազան արարողության ավարտին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի շիրիմի առջեւ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ Հայրապետի մահվան 19-րդ տարելիցի առիթով:

Եկեղեցականաց դասը եւ ուխտավոր հայրդիները աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ լուսահոգի Գարեգին Ա Կաթողիկոսի հոգու խաղաղության եւ հանգստության համար:

Հավատացյալների երկրպագության համար դուրս բերվեց աստվածամուխ սուրբ Գեղարդը



Հուլիսի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եկեղեցականների հանդիսավոր թափորով առաջնորդվեց Միածնաէջ Մայր տաճար:

Նորին Սրբությունը Մայր տաճարի ավանդատուն-թանգարանից դուրս բերեց աստվածամուխ ս. Գեղարդը՝ հավատացելոց օրհնության եւ երկրպագության համար:

Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկաներին՝ հայցելով Աստծո պահպանությունն ու օգնականությունն ամենքին:

Ս. Գեղարդը Մայր տաճարում մնաց մինչեւ Երեկոյան ժամերգության ավարտը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց մարտական դիրքեր

Հուլիսի 7-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց հայ-ադրբեջանական միջպետական սահմանի՝ նախիջեւանյան հատվածի տարբեր մարտական դիրքեր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին այնտեղ դիմավորեցին ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի տեղակալ գեներալ-լեյտենանտ Ստեփան Գալստյանը, N զորամասի հրամանատարական կազմը եւ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը՝ գնդերեցների ուղեկցությամբ:

Բանակի սպաների եւ զինվորների հետ զրույցում Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունը հայտնեց Ադրբեջանի կողմից վերջին շաբաթներին սանձազերծված լարվածության աճի վերաբերյալ: Նորին Սրբությունը, աղոթելով հայրենի երկրի խաղաղության համար, երկնավորից հայցեց, որ հայոց զորականների բազուկը միշտ հաղթական լինի, եւ կարողանան իրենց քաջարի ոգով պաշտպանել Հայոց աշխարհի խաղաղությունը, իրենց մայրերի եւ քույրերի անդորրը:

Դիրքապահների ուղեկցությամբ տեղում դիտարկելով վերջին զարգացումները՝ Գարեգին Բ Կաթողիկոսն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց մարտական հերթապահություն իրականացնող զինվորներին ու նրանց ընծայեց խաչեր ու Աստվածաշունչ մատյաններ՝ մաղթելով խաղաղ ու անվտանգ ծառայություն:

Հայրենյաց պաշտպանների հետ զրույցում Վեհափառ Հայրապետը մասնավորապես նշեց, որ հայ զինվորը մշտապես իր աղոթքներում է: Անդրադառնալով Բանակ-եկեղեցի կապին՝ Հայոց Հայրապետն ընդգծեց. «Տարակույս չունենաք, ինչպես անցյալում, այնպես եւ այսօր ու ապագայում, հայ հոգեւորականը լինելու է հայ զինվորի կողքին, լինելու է առաջնագծում»: Սահմանապահ զինվորականներին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրեց ծառայության ավարտին այցելել Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ հյուրընկալվել Հայոց Հայրապետին:

Զինվորականները շնորհակալություն հայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ օրհնության եւ զորակցության խոսքերի համար, ու փոխադարձաբար մաղթեցին ուժ ու երկար տարիների կյանք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն իր ծառայության մեջ:



Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2017-2018 ուսումնական տարվա փակումը

Հուլիսի 3-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի՝ 2017-2018 ուսումնական տարվա փակման հանդիսությունը:

Միջոցառումը բացվեց միասնական՝ Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ եւ ճեմարանի օրհներգերը:

Այնուհետեւ խոսք ասաց ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

«Յուրաքանչյուր տարի ճեմարանական կյանքի վրա, որպես անմոռաց հիշատակ ուսումնական բուռն գործընթացի, դաջվում է աղոթական հոգենորոգ ապրումների ու պարզ ընտանեկան՝ քրիստոնյա համայնքին հատուկ անցուդարձի կնիքը:

Հոգեւոր կրթության առանցքում ընկած է զոհողության ոգին, որը թրծվելով վեցամյա բովում՝ վերածվում է ծառայելու պատրաստակամության: Ընդ որում, ճեմարանի կրթությունը հաջողված պիտի համարվի, եթե այստեղ ավարտող ցանկացած սան գիտակցի, որ դեռեւս մի ողջ օվկյան գիտության եւ իմաստության մնացել է աննվաճ իր կյանքում: Այսուհանդերձ, իր տարիների ուսումը բարերար հարթակ պիտի ստեղծի ու անհագուրդ ցանկություն՝ իր մնացյալ ծառայական կյանքը դարձնելու ոչ այլ բան, քան Աստծո միջոցով աշխարհը բացահայտելու ճամփորդություն՝ չմոռանալով իհարկե սուրբ Նազիազանցի Հայրապետի խոսքերը. «Հիշիր Աստծուն ավելի հաճախ, քան դու շնչում ես»,- ասաց տեսուչ հայր սուրբը:

Գարեգին վարդապետը տեղեկացրեց անցած ուսումնական տարում արձանագրված հաջողությունների մասին: Տեղեկացվեց, որ ընթացիկ ուսումնական գործընթացները համեմվեցին մշակութային միջոցառումների մասնակցությամբ, միջհամալսարանական գիտական ու սպորտային ծրագրերով: Տեղի ունեցավ ս. Հովհան Օձնեցի Կաթողիկոսի գահակալման 1300-ամյակին նվիրված գիտաժողով, Մաղաքիա արք. Օրմանյանի մահվան 100-ամյա տարելիցին նվիրված նիստ: Ուսումնական տարվա ընթացքում դասախոսելու համար ճեմարան հրավիրվեցին հեղինակավոր դասախոսներ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իսրայելից եւ այլն: Գիտելիքները ծառայության մեջ կիրառելու նպատակով՝ ճեմարանականներից շատերն այցելել են մանկատներ, ծերանոցներ, հիվանդանոցներ ու բարեսիրական այլ կառույցներ, նաեւ Երեւանի եւ Էջմիածնի տարածաշրջանի երիտասարդական որոշ հաստատություններ:

Տեսուչը հայտնեց, որ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ այս տարի եւս ճեմարանի սաները մեկամսյա ամառային ծառայության կմեկնեն Հայաստանի, ինչպես նաեւ Ռուսաստանի, Եվրոպայի եւ ԱՄՆ-ի թեմեր՝ հմտանալու թեմական, հովվական ծառայության մեջ: Տեղեկացվեց նաեւ, որ վերջերս տեղի ունեցան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ասպիրանտուրայի առաջին դիմորդների ընդունելության քննությունները, ինչի արդյունքում առաջիկա ուսումնական տարում ճեմարանը կգործի ամբողջական եռաստիճան կրթության ձեւաչափով:

Հայր սուրբն իր երախտագիտությունը հայտնեց դասախոսներին եւ տեսչական կազմին՝ նվիրումի եւ շահեկան համագործակցության, վերատեսուչ սրբազանին՝ օժանդակության եւ օգտակար խորհուրդների համար:

Անդրադառնալով ճեմարանի ու առհասարակ հոգեւորականների կրթության հանդեպ Նորին Սրբության ուշադրությանը, որպես ապացույց հայրական սիրո, այս առաքելության հանդեպ մեծ հավատքի ու տեսիլքի, հայր Գարեգինը Վեհափառ Հայրապետին ճեմարանի տեսչության, դասախոսական եւ ուսանողական կազմերի անունից փոխանցեց ներկաների սերն ու որդիական խոնարհումը:

Այնուհետեւ երաժշտական կատարումներով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ Արտաշես Բաբուրյանի: Ուսանողության անունից խոսք ասաց ավարտական՝ 6-րդ լսարանի սան Դավիթ սրկ. Սահակյանը, իսկ Նարեկ Գասպարյանը (2-րդ լսարան) ասմունքեց Հ. Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը: Քահանայից պատրաստության շրջանավարտ լսարանի սաների անունից իր շնորհակալական խոսքն ուղղեց ներկաներին Միքայել դպիր Փարսադանյանը:

Ներկաներին ողջունեց նաեւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական բարձրագույն հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը: Սրբազան հայրը, անդրադառնալով օրվա խորհրդին, ի մասնավորի նշեց. *«Հիրավի սպասված է այսօրը թե՛ սանի եւ թե՛ մանկավարժի համար: Սակայն այդ սպասումը ճեմարանցու հոգեբանության մեջ այնքան չի առնչվում արձակուրդի կամ հանգստի գաղափարի հետ, որքան, որ կապվում է գիտության հաջորդ աստիճանը հաղթահարելու առաջադրանքի հետ: Այդ գիտակցության լույսի ներքո պետք է դիտել ուսումնական տարվա փակման հանդիսավոր արարողությունը, որն իր բնույթով հատուկ է միայն ճեմարանական միջավայրին, ըստ էության՝ տոնական: Գիտության աստիճանի հաղթահարումն այլ խոսքով՝ ճեմարանական միջավայրում տոնական նշանակություն ունի: Ահավասիկ այսօր մենք տոնում ենք այդ իրադարձությունը: Աշխարհիկ հաստատությունները չունեն այս ավանդույթը»*:

Հանդիսության ընթացքում կատարվեց նաեւ նվիրաբաշխություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ ուսման մեջ բարձր առաջադիմության եւ կարգապահության համար պարգեւների արժանացան տարբեր լսարանների ուսանողներ:

Վերջում ճեմարանի սաներին, դասախոսներին եւ ներկա եկեղեցականներին իր պատգամն ուղղեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Մեր Սուրբ Եկեղեցու կյանքում մեծ դերակատարություն եւ առաքելություն է վերապահված Գեւորգյան հոգեւոր ճեմարանին՝ կրթելու, դաստիարակելու եւ «քաջ հովիվներ» հասցնելու Հայ Եկեղեցու համար, ովքեր Տիրոջով զորացած եւ մեր լուսամիտ հայրերի հավատքով գոտեպնդված՝ պիտի շարունակեն Ավետարանի լույսը ջամբել մեր «փոքր ածուին»՝ տերունապատվեր սիրով, հավատքով ու հույսով առաջնորդելով դեպի փրկություն: Ճեմարանը մեր Եկեղեցու զարկերակն է, ներկայի եւ ապագայի առհավատչյան, որի զորացումն անխտիր ամենքիս սրբազան պարտականությունն է: Հետեւաբար, առավել գուրգուրանքով պիտի մոտենանք հոգեւոր կրթության եւ գիտության այս լուսավոր կաճառին՝ մեր արդյունավոր նպաստը բերելով ճեմարանի զարգացմանը եւ գործունեության արդյունավորմանը:

Այսօրվա մեր կյանքի պայմաններում, զանազան ներքին ու արտաքին մարտահրավերներին դեմ հանդիման, մեր Սուրբ Եկեղեցին եւ ժողովուրդը կարիքն ունեն բարձր պատրաստվածություն եւ մեծագույն նվիրում ունեցող եկեղեցականների, ովքեր իրենց հոգեւոր ներուժով, իրենց հավատքի եւ կյանքի օրինակով պիտի շարունակեն առաջնորդել եւ հովվել մեր ժողովրդին: Ժամանակի բոլոր մարտահրավերներին եւ խնդիրներին մեր պատասխանը պետք է լինի նաեւ ազգի ու եկեղեցու պայծառության ու վերելքի մեծ տեսլական ունեցող հոգեւորականների նոր սերնդի պատրաստությունը: Մեր Սուրբ Եկեղեցու, ազգի ու հայրենիքի պայծառության տեսիլքն է, որ պիտի առաջնորդի մեզ քրիստոսապատվեր առաքելության ճանապարհին: Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ ուրախությամբ եւ հպարտությամբ ենք արձանագրում, որ մեր եկեղեցականաց շարքերում բազում են այդպիսիք, ովքեր անտրտունջ, նախանձախնդիր ոգով եւ անսակարկ նվիրվածությամբ իրենց ծառայությունն են բերում մեր ժողովրդին՝ չծնկելով դժվարությունների առաջ, արձանագրելով նորանոր հաջողություններ իրենց ծառայության մեջ»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը ճեմարանականներին պատգամեց ամենայն նախանձախնդրությամբ շարունակել տերունավանդ սպասավորությունը մեր ժողովրդի կյանքում՝ ամուր պահելով ծառայանվիրումի կամքը, անսասան՝ հավատքը, եւ անմնացորդ՝ սերը Սուրբ Եկեղեցու հանդեպ: *«Թեեւ մեր ժամանակացույցի ծանրաբեռնվածության պատճառով հնարավոր չի լինում առավել հաճախ հանդիպել ձեզ հետ, սակայն դուք միշտ մեր աղոթքներում եք, մեր ուշադրության կենտրոնում: Ուսման մեջ արձանագրած ձեր հաջողություններն ուրախացնում են Հայրապետիս, թերացումները՝ մտահոգություն պատճառում եւ բերում անհրաժեշտությունը՝ դասախոսական կազմի հետ միասին ամեն ջանք գործադրելու մշտապես ձեր ուսման արգասավորման համար: Սիրելի՛ սաներ, տեսնում եք, որ մեր Սուրբ Եկեղեցու դեմ ծառացած են արդի աշխարհի մարտահրավերները, աշխարհիկացման ընթացքները, նոր ժամանակներում հոգեւորի անտեսման միտումները, աղանդների ներթափանցումն ու աղանդավորականների քայքայիչ գործելակերպը: Այս ամենի առջեւ պիտի նախանձախնդիր լինեք՝ հավատքով, գիտելյաց պաշարով զորանալու, որպեսզի Քրիստոսի առաքյալների պես շարունակեք Կենաց Խոսքը քարոզել եւ Ավետարանի լույսը սփռել մեր ժողովրդի կյանքում»,-* հավելեց Հայոց Հովվապետը՝ մաղթելով, որ ուշիմ եւ օրինակելի վարքով, գովելի նվիրումով արդյունավորեն իրենց ուսումը հոգեւոր կաճառում, որպեսզի կարողանան նորանոր հաղթանակներով հյուսել հայ ժողովրդի եւ Հայոց Եկեղեցու նորօրյա փառքը:

Շարունակությունը՝ էջ 5

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեկնարկեց ՀԵՀԵՄ



Հուլիսի 4-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեկնարկեց «Դեպի հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» համահայկական երիտասարդական հավաքը՝ կազմակերպված Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման (ՀԵՀԵՄ) կողմից:

Հուլիսի 4-ից 8-ը Ծաղկաձորում անցկացված երիտասարդական հավաքին մասնակցեց ավելի քան քսան երկիր ներկայացնող շուրջ 400 եկեղեցասեր երիտասարդ:

Հավաքն սկսվեց ուխտագնացությամբ դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր երիտասարդները հանդիպում ունեցան Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Նորին Սրբությանը դիմավորեցին Հայրապետական մաղթերգով:

Ուխտավորները հոգեւոր դասի առաջնորդությամբ աղոթեցին, որից հետո Վեհափառ Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված ուխտավոր հայորդիների եւ աշխարհասփյուռ հայության բարօրության, հայրենիքի եւ Հայոց Եկեղեցու պայծառության եւ անսասանության համար:

Հայրապետի օրհնությամբ զորանալու եւ վերադառնալու իրենց բնակավայրեր:

Ապա ներկաներին իր պատգամը բերեց Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը՝ փառք եւ գոհություն բարձրացնելով առ Աստված, որ արժանացրել է երիտասարդությանն այս շնորհներին՝ հոգեւոր առաջնորդների հետ ուխտի գալու եւ մեկտեղվելու Սուրբ Էջմիածնում, Միածնաէջ տաճարում հայցելու Երկնավորի օրհնությունները Հայոց աշխարհի եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի համար:

Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ երիտասարդության տարվա առիթով, Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի 100-ամյակների խորհրդի լույսի ներքո աշխարհասփյուռ տարբեր համայնքներում եւ թեմերում կազմակերպված զանազան հավաքներով, միջթեմական երիտասարդական հանդիպումներով ու միջոցառումներով անդրադարձ է կատարվել այն առաքելությանը, որին կոչված է հայ երիտասարդն ազգային-եկեղեցական կյանքում, ինչպես նաեւ ազգային կյանքը հուզող խնդիրներին, եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին:

Այնուհետեւ ՀԵՀԵՄ հոգեւոր պատասխանատու, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը խոսք ուղղեց Նորին Սրբությանը՝ տեղեկացնելով, որ աշխարհով ցրված թեմական կառույցներից երիտասարդներն ուխտագնացության են եկել հայրենիք եւ Մայր Աթոռ՝ իրենց հոգիներում նորոգելու հայրենասիրության, եկեղեցասիրության եւ աստվածսիրության վեհ զգացումները, եկել են աղոթքով նորոգվելու, Վեհափառ Հայրապետի հետ ուխտագնացությունը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ հայրենիք երիտասարդական տարվա բարձրակետը նկատեց՝ նշելով. *«Արդարեւ, ո՞ւր, եթե ոչ հայրենիքում պիտի կազմակերպվեր հիմնական միջոցառումը. հայրենիք, ուր մեր պատմությունն է փառապանծ՝ մեր ժողովրդի իրագործումներով, քրտինքով ու արյամբ ձեռք բերված հաղթանակներով: Հայրենիք, որտեղ եւ ներկան է մեր ժողովրդի՝ իր բազում մարտահրավերներով ու խնդիրներով, որոնց լուծմանը կոչված ենք մենք՝ մեր ժողովրդի յուրաքանչյուր զավակի եւ մեր եկեղեցու հոգեւոր սպասավորների հետ: Հայրենիքն է նաեւ մեր լուսավոր ապագան: Մեր հույսերը սերտորեն կապված են հայրենիքի հետ, եւ նրա ապագայի կերտման գործում յուրաքանչյուր անձ, յուրաքանչյուր հայորդի ունեն իրենց սրբազան ու նվիրական պարտականությունը...»*:

Վեհափառ Հայրապետը հաստատեց, որ հավաքի օրերին երիտասարդները պիտի շրջեն հայրենիքում, աղոթեն սրբազան տաճարներում ու վանքերում, այցելեն նվիրական եւ սրբազան վայրեր՝ Ծիծեռնակաբերդ, Օշական եւ Սարդարապատ, իրենց հայացքն ուղղեն դեպի Արցախ եւ Արարատ լեռը, շփվելով հայաստանաբնակ իրենց եղբայրների ու քույրերի հետ՝ պիտի հաղորդ դառնան երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին, ներշնչվեն հայրենիքի իրականությամբ, որ նոր հնարավորություններ է բացում մեր ժողովրդի առջեւ՝ կերտելու երազների իր հուսաբեր, լուսավոր երկիրը:

«...Այս ամենի մեջ, սիրելիներ, դուք պիտի անդրադառնաք ձեր կոչմանն ու առաքելությանը, ձեր դերակատարությանը: Երիտասարդներդ ներուժն եք ազգի, հզոր ու շարժիչ ուժը, եւ դուք պետք է այդ վստահությամբ հրաշագործեք մեր հայրենական, ազգային-եկեղեցական կյանքում: Դուք, որ համախմբված եք Եկեղեցու կամարների ներքո, դուք, որ ձեր հոգին բացել եք Աստծուն, դուք, որ ձեր սրտերի մեջ կրում եք Ավետարանի լույսը, Քրիստոսի պատվիրաններն ու պատգամները, ինչպես քիչ առաջ ընթերցված Ավետարանում ունկնդիր եղաք, պիտի դառնաք աղը ազգային մեր կյանքի, համ պիտի տաք մեր կյանքին՝ ձեր արժանավոր գործերով, ձեր նվիրյալ հավատքով, ձեր հոգուց ու շուրթերից առ Աստված բարձրացող մշտահունչ աղոթքներով: Ավետարանի խոսքի համաձայն՝ դուք պիտի լինեք լույսը կյանքի՝ ձեր ներուժով ու հավատքի զորությամբ»,- ասաց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցելով, որ Տերն Իր շնորհները հեղի երիտասարդների եւ աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքից ներս, որպեսզի յուրաքանչյուրն ապրի ազգի, հայրենիքի եւ Սուրբ Եկեղեցու առջեւ պարտքի բարձր գիտակցությամբ:

Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը փոխանցեց ՀԵՀԵՄ հոգեւոր պատասխանատու Հովնան արքեպիսկոպոսին, ով կառույցի հաստատման առաջին իսկ օրվանից սիրով, հանձնառությամբ եւ նախանձախնդրությամբ կատարեց իր պարտականությունները՝ պարբերաբար եկեղեցասեր երիտասարդների համախմբումներ կազմակերպելով ինչպես հայաստանյան, այնպես եւ սփյուռքյան թեմերում: Հայոց Հովվապետը նաեւ իր օրհնությունը բերեց թեմական բոլոր առաջնորդներին, ովքեր քաջալերում, խրախուսում եւ հովանավորում են եկեղեցասեր երիտասարդաց միությունների աշխատանքը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված զորացնի հայոց երիտասարդությանը՝ իր առաքելությունը փառքով կատարելու եւ արժանի լինելու քաջ ու մեծագործ մեր հայրերի սրբազան գործին:

Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքից հետո երիտասարդները երգեցին «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Մայր Աթոռում երիտասարդները հոգեւոր հովիվների եւ ՀԵՀԵՄ կենտրոնական գրասենյակի աշխատակիցների ուղեկցությամբ այցելեցին Մայր տաճար, ծանոթացան թանգարաններում պահվող սրբություններին եւ պատմական եկեղեցական-ազգային արժեքներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց համահայկական երիտասարդական հավաքի բացմանը

Հուլիսի 5-ի երեկոյան Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ծաղկաձորում ներկա գտնվեց Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման (ՀԵՀԵՄ) «Դեպի հայրենիք, դեպի Սուրբ Էջմիածին» համահայկական երիտասարդական հավաքի բացմանը:

Արարողության ընթացքում Նորին Սրբությունը հայրապետական իր պատգամն ուղղեց Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր թեմերից եկեղեցականների առաջնորդությամբ ժամանած երիտասարդներին:

Ուրախություն հայտնելով եկեղեցասեր երիտասարդների հավաքի առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնավորապես ասաց.

«Մեզ համար խորին գոհունակություն էր այսօր՝ առավոտյան, ողջունելու ձեզ հայոց հոգեւոր կենտրոնում եւ Մեր օրհնությունները վերստին բերելու ամենքիդ: «Դեպի հայրենիք, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին» խորագիրը կրող այս ուխտագնացության բոլոր մասնակիցներիդ համախմբումը Հայաստանում, աղոթքների մեկտեղումը եւ մեր նվիրական սրբավայրեր այցելությունները պիտի լինեն ձեզ համար հոգու նորոգության, երկնային օրհնությունների առատության աստվածապարգեւ շնորհ: Դուք, հայրենի երկրում համախմբվելով, վկայում եք ձեր միասնությունը հավատքով, ձեր հայրենասիրությունը, ձեր ազգանվեր ու եկեղեցասեր ոգին, որ երիտասարդներիդ առաջնորդում է ձեռքբերումների ու հաջողությունների: 100-ամյա հերոսական պատմություն ունեցող Սարդարապատից,

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հուլիսի 10-ին, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով:

Անդրադարձ կատարվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դեմ վերջին շաբաթներին իրականացվող հակականոնական գործողություններին, այդ թվում եւ դիվանատան շենք ներխուժելու եւ Մայր Աթոռի աշխատանքը խոչընդոտելու փաստերին: Քննարկելով ստեղծված կացությունը՝ ԳՀԽ անդամներն անընդունելի եւ դատապարտելի նկատեցին հայտնի նախաձեռնության որդեգրած քայլերը, որոնք խաթարում են ներեկեղեցական անդորրն ու գայթակղություն դառնում հավատացելոց համար:

Տեղեկացվեց, որ խնդրի առնչությամբ իրենց անհանգստության եւ դատապարտության խոսքն են հնչեցրել բազում հավատացյալներ ինչպես Հայաստանից, այնպես եւ Սփյուռքից, եպիսկոպոսաց դասը եւ բազմաթիվ եկեղեցականներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները 6 հուլիսի, 2018 թվակիր խնդրագրով դիմել են Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Կորյուն աբեղային պատասխանատվության ենթարկելու խիստ միջոցների ձեռնարկման վերաբերյալ: Իսկ Մայր Աթոռի կարգապահական հանձնախմբի՝ հուլիսի 6-ի նիստում միաձայն որոշում է կայացվել՝ առաջարկել Նորին Սրբությանը կարգալույծ հռչակել Կորյուն աբեղա Առաքելյանին:

Այսուհանդերձ, ելնելով Եկեղեցու կողմից սերը եւ ներողամտությունը քրիստոնեական մոտեցումի եւս մի միջոց արտահայտելու առաքելությունից՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը, անսալով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորին, որոշեց մեկշաբաթյա վերջնաժամկետ սահմանել, որպեսզի անդրադարձումի եւս մեկ առիթ ընծայվի նախաձեռնության անդամներին՝ դադարեցնելու հակականոնական իրենց գործողությունները եւ զղջման ու ապաշխարության ճանապարհով վերադառնալու Սուրբ Էջմիածնի խնամակալ հովանու ներքո: Կորյուն աբեղայի համար որոշվեց անդրադարձումից հետո սահմանել ապաշխարության շրջան՝ վանքերից մեկում: Ժողովին Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միավորման հոգեւոր պատասխանատու Հովնան արք. Տերտերյանը զեկույց ներկայացրեց «Դեպի հայրենիք, դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին» համահայկական երիտասարդական ուխտագնացության արդյունքների վերաբերյալ: ԳՀԽ անդամները գնահատանք հայտնեցին կազմակերպիչ հանձնախմբին՝ հավաքի բարեհաջող անցկացման համար: Կարեւորվեց նաեւ ՀԵՀԵՄ կենտրոնական գրասենյակի եւ թեմերի երիտասարդական կառույցների հետեւողական աշխատանքը երիտասարդության հետ:

համահայկական երիտասարդական հավաքը



մայիսյան ազատամարտերից մինչեւ օրս հայ երիտասարդի անմնացորդ նվիրումով է նաեւ, որ մեր ազգը ձեռքբերումներ է կերտել, ազգային գիտակցությունն ու ոգին բարձրացրել:

Երիտասարդությունն ամուր է պահել հարազատ մեր բնօրրանը, պաշտպանել եւ այսօր էլ պաշտպանում է Մայր հայրենիքը՝ Հայաստանն ու Արցախը, ուր դարեր ի վեր, ավետարանական խոսքին համահունչ, մեր նախնիներն ամբարել են բյուրավոր հոգեւոր գանձեր՝ իրենց սրտերը նորոգելով հավատքի ու սիրո գործերով: Դուք եք, սիրելիներ, մեր ազգի ու եկեղեցու ապագան, այլեւ ներկայի կերտողները, ձեր ջանքերով հայրենական եւ հոգեւոր մեր կյանքում հաճախ անհնարինը դառնում է հնարավոր, եւ արձանագրվում են նորանոր իրագործումներ ու հաղթանակներ ազգային ու եկեղեցական մեր անդաստանում:

Իսկապես, հայ լինելն առաքելություն է: Այդ առաքելությունը թե՛ այստեղ՝ հայրենիքում, եւ թե՛ սփյուռքում ենթադրում է հոգեւոր ու ազգային արժեհամակարգի պահպանություն ու զորացում: Զանազան համայնքների եկեղեցասիրաց եւ այլ կառույցներին անդամակցելով՝ դուք գովելի նպաստ եք բերելու երիտասարդության շրջանակներում մեր հավատքի, մշակույթի ու լեզվի պահպանությունը կարեւորելու, ազգային կյանքում ձեր դերակատարությունը հստակեցնելու եւ գովարժան հանձնառություններ ստանձնելու համար: Այդ առաքելությունը չի կարող ամբողջական լինել հայրենիքից կտրված ու հայրենական կյանքին անհաղորդ լինելով: Այստեղ են մեր նվիրական սրբությունները, հիշատակները, մեր ժողովրդի հավատավոր հոգու վկայությունները: Հայրենիքում է մեր բարեփոխվող ներկան՝ լուսավոր նոր գալիքի վճռականությամբ ու տեսլականով: Այսօր, երբ Հայաստանի առջեւ բացված են նոր հեռանկարներ, դուք նորովի եք առնչվելու հայրենական կյանքին՝ ամրանալով մեր հարազատ երկրին ու պետությանը ձեր ներուժը բերելու կամքի մեջ: Հայրենիքն է մեր մեծագույն գանձը, եւ այստեղ պիտի լինեն նաեւ ձեր սրտերը՝ սերը, նվիրումն ու նախանձախնդրությունը առ հայրենին, ըստ ավետարանական խոսքի՝ «Ուր ձեր գանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կլինեն»:

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձավ հայ հասարակության առջեւ ծառացած զանազան մարտահրավերներին: Այս կապակցությամբ Նորին Սրբությունը նշեց. *«Սիրելիներ, դարեր ի վեր, հայոց մեծ դարձից մինչեւ գրերի գյուտ ու մինչեւ Սարդարապատ, Արցախյան հերոսամարտ ու մեր օրեր, հայը չի պատկերացրել իր կյանքն ու գոյությունն առանց քրիստոնեական իր հավատքի, առանց ազգային իր ինքնության: Պատմության տարբեր ժամանակահատվածներում մարտահրավերներ են առաջ եկել՝ ուղղված թե՛ մեր հավատքի եւ թե՛ ազգային արժեհամակարգի դեմ: Սուրբ Պողոս առաքյալն ասում է. «Բայց հավատարիմ է Աստված, որ ձեզ ավելի փորձության մեջ չի գցելու, քան կարող եք տանել. այլ՝ փորձության հետ փրկության ելք էլ է ցույց տալու, որպեսզի կարողանաք համբերել» (Ա Կորնթ. Ժ 13): Այսօր էլ բազում են խնդիրները, որ ծառացած են մեր ազգի առջեւ Հայաստանում եւ Սփյուռքում: Սիրելիներ, միասնական համախմբող ոգին, որ առկա է ձեր մեջ, պիտի դառնա թթխմոր համազգային մեր կյանքի զարթոնքի: Ճշմարիտ քրիստոնյան գիտի, որ իր յուրաքանչյուր օրը պարգեւ է իր Արարչից, եւ որ այդ պարգեւն առավել պայծառազարդվում է առ Աստված հավատքից ծառագող սիրով, հավատավոր գործերով:*

Մեր մաղթանքն ու հորդորն է ձեզ, որպեսզի ձեր բնակավայրերում, ընկերային ձեր շրջապատում եւ ձեր ընտանիքներում մշտապես լինեք Աստծո պատգամաբերներ, Քրիստոսի սիրո երաշխավորներ, մեր Սուրբ Եկեղեցու եւ հայրենիքի հարազատ զավակներ, որպեսզի ձեր բարի հավատքից բխող հայրենանվեր ու ազգաշեն գործերով, յուրաքանչյուրդ ձեր կարողությունների չափով ներդրում բերեք Հայաստանում եւ Սփյուռքում հայ կյանքի բարօրությանն ու բարգավաճմանը, նոր ձեքբերումների ու հաջողությունների կերտմանը»:

Հայոց Հայրապետը մաղթեց, որ Տիրոջ կողմից երիտասարդաց հոգիներում ցանված սերմերն առատապես պտղաբերեն ազնիվ, նվիրյալ գործերով:

Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց հավաքի մասնակից երիտասարդների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին եւ դրանց հաղթահարմանն ուղղված ջանքերին, Եկեղեցու քարոզչական եւ հովվական առաքելությանը եւ դրանում երիտասարդության դերակատարությանը: Ի պատասխան երիտասարդների հարցումների՝ Գարեգին Բ Հայրապետն անդրադարձավ նաեւ իր հոգեւոր փորձառությանը եւ կյանքի ուղուն:

Համահայկական երիտասարդական հավաքն ամփոփվեց ուխտի Պատարագով

Հուլիսի 8-ին՝ մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Ս. Պայծառակերպության տոնին, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ, որով ամփոփվեց համահայկական երիտասարդական հնգօրյա հավաքը: Պատարագիչն էր ՀԵՀԵՄ-ի հոգեւոր պատասխանատու, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը:

Սրբազան արարողությանը ներկա հավաքի շուրջ չորս հարյուր մասնակիցները եւ այս առիթով տարբեր թեմերից ժամանած երիտասարդները զանգակատան առջեւ ողջունեցին Վեհափառ Հայրապետին, ով զանգերի ավետաբեր ղողանջների ներքո եկեղեցականների թափորով առաջնորդվեց տաճար, ուր նաեւ իր խոնարհումը բերեց գավթում ամփոփված մեր հավատի հայր սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի մասունքներին:

Ուխտի Պատարագի ընթացքում պատարագիչ Հովնան սրբազանն անդրադարձ կատարեց տոնի խորհրդին եւ այդ խորհրդով յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքի պայծառակերպման անհրաժեշտությանը: *«Մեր Թաբոր լեռը Հայաստանն է, որովհետեւ այս սուրբ հողի վրա իջավ Միածին Որդին: Ամեն անգամ, երբ ոտք ենք դնում Մայր Հայաստան, Ս. Էջմիածին, նորոգում ենք մեր կյանքն Աստծուն ընծայելու ուխտը՝ մեր հոգու մեջ կրելու պատկերը Սուրբ Էջմիածնի, հավատքի տեսիլքը մեր նախնյաց, մեր ներկան իմաստավորելու հոգեւոր ու բարոյական արժեքներով եւ գալիք սերունդների կյանքը լուսավորելու եկեղեցանվեր ու ազգայնասեր գաղափարախոսությամբ: Դրա համար է, որ երկրորդում ենք առաքյալի խոսքը՝ ասելով՝ Տեր, բարվոք է, որ այսօր այստեղ ենք»,-* մասնավորապես նշեց սրբազանը:

Հովնան արքեպիսկոպոսը նաեւ խոսեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ այս օրերին Հայաստանում անցկացվող համահայկական երիտասարդական հավաքի ընթացքի մասին: Սրբազանն ընդգծեց, որ անցնող օրերին երիտասարդներն իրենց զրույցներ, խորհրդածությունների եւ ընդհանրական աղոթքի շնորհիվ լցվեցին հայրենիքի եւ Ս. Էջմիածնի խորհրդով եւ հիրավի պայծառակերպված վերադառնալու են իրենց երկրներ՝ իրենց հետ տանելով Նորին Սրբության հայրական սերն ու օրհնությունը եւ ամենակարեւորը՝ հայրենիքով, Ս. Էջմիածնով ապրելու խորհուրդը:



Քարոզի ավարտին երիտասարդներն ընթերցեցին իրենց ուխտագիրը.

«Ուխտի ենք եկել Մայր Հայաստան, Ս. Էջմիածին: Եվ այժմ, ուխտագնացության մասնակիցներս, Ս. Էջմիածնի մշտանորոգ օրհնության ներքո եւ ներկայությամբ Մայր Աթոռիս ազգընտիր գահակալի, հոգեւոր դասի եւ համայն հավատացելոց՝ ուխտում ենք լինել Աստծո պատվիրաններին հետեւող եւ մեր կենդանի հավատքը բարի գործերով փաստող ճշմարիտ քրիստոնյաներ:

Ուխտի ենք եկել Մայր Հայաստան, Սուրբ Էջմիածին: Հավատքի ճշմարիտ գիտակցությամբ ուխտում ենք հավատարիմ մնալ մեր Սուրբ Եկեղեցու ուղղափառ դավանությանը, զորավիգ լինել հայոց պետականության հզորացմանը, նախանձախնդիր՝ ազգային ինքնության եւ մեր նախնյաց կտակած մնայուն արժեքներին:

Ուխտի ենք եկել Մայր Հայաստան, Սուրբ Էջմիածին՝ աղոթքով պայծառակերպված, երիտասարդական ավյունով առլեցուն, բարձր գիտակցությամբ, միասնականության ոգով՝ մեկ անգամ եւս հավաստելու մեր անսահման սերը դեպի սրբազան երկիրը Հայրենի եւ Սուրբ Եկեղեցին:

Ուխտի ենք եկել Մայր Հայաստան, Սուրբ Էջմիածին: Մեր սերն ու հավատարմությունն են հայտնում Վեհափառ Հայրապետին եւ խոստանում առավել նվիրումով մեր նախանձախնդիր ծառայությունը բերել ի խնդիր Եկեղեցու եւ հայրենիքի պայծառության եւ շինության:

Ուխտի ենք եկել Մայր Հայաստան, Սուրբ Էջմիածին: Սուրբ Էջմիածինը ծննդավայրն է մեր սրտի եւ հոգու, հանդիպման վայրը՝ Աստծո եւ մարդկանց: Որպես հարազատ զավակներն այս Սուրբ Եկեղեցու՝ աղոթում ենք, որ Աստված անսասան, ծաղկուն եւ բարգավաճ պահի սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ զորացնելով մեզ հավատքի, սիրո եւ եղբայրսիրության մեջ, որպեսզի դառնանք հայրենասիրության եւ նվիրումի անսպառ աղբյուր: Ամեն»:

Սուրբ Պատարագի ավարտին, նախագահությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց երիտասարդների օրհնության կարգ, որից հետո Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր պատգամն ուղղեց երիտասարդներին՝ հորդորելով, որ իրենց շուրթերից մշտապես հնչի պայծառակերպության սրբազան խորհրդով լուսավորված աղոթքը: Նորին Սրբությունը կոչ արեց հայորդիներին՝ տերունապատվեր շնորհների ներքո միշտ լինել Աստծո սեփական ժողովուրդ եւ աստվածահաճո գործերով պայծառացնել, շենացնել ու հզոր դարձնել հայրենիքը, լուսավոր՝ Հայոց Սուրբ Եկեղեցին:

Պատարագի ավարտին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու բակում երիտասարդները մասնակցեցին Վարդավառի ժողովրդական տոնակատարություններին:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2017-2018 ուսումնական տարվա փակումը

Սկիզբը՝ էջ 3

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանին, տեսչական կազմին եւ բարեջան դասախոսներին՝ իրենց նվիրյալ գործունեության համար:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաեւ այն հոգեւորականներին, ովքեր իրենց ծառայության հետ մեկտեղ ազնիվ նպաստ են բերում ճեմարանականների կրթությանն ու ճեմարանի գործունեության արգասավորմանը՝ պատգամելով մեծ ուշադրությամբ, հույժ կարեւորումով շարունակել դասախոսական իրենց ծառայությամբ կրթել ու դաստիարակել իրապես նվիրյալ եւ լուսամիտ եկեղեցականների, Տիրոջ հնձի համար պատրաստել սահակմեսրոպյան ոգով նոր մշակների:

Նորին Վեհափառությունն աղոթեց, որ Բարձրյալն Աստված անսասան պահի ու պահպանի մեր հայրենիքը եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին, զորավոր պահի եղբայրսիրության եւ նվիրումի ոգին Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, որպեսզի Հայ Եկեղեցու կրթական դարբնոցից դուրս եկած շրջանավարտները ժրաջան ծառայությամբ հոգեւոր նոր շունչ հաղորդեն մեր ժողովրդի կյանքին:

Հանդիսությունը եզրափակվեց հայրապետական Պահպանիչ աղոթքով:

Անցած տարում ճեմարանն ունեցել է 106 ուսանող, հաստատությունում դասավանդել է 25 հոգեւորական եւ 41 աշխարհական դասախոս: Այս տարի ճեմարանն ավարտեց 27 սարկավագ:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Ավարտած նկատելով Իսահակ վրդ. Պողոսյանի՝ Բուլղարիայի հայոց թեմում առաջնորդի պաշտոնավարման շրջանը՝ հայր սուրբը ծառայության է կոչվել Ուկրաինայի հայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Զավեն վրդ. Յազիչյանը, ազատվելով Եգիպտոսի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, հոգեւոր սպասավորությունը կշարունակի Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում՝ հոգեւոր տեսչի իշխանության ներքո:

Աղան աբդ. Երնջակյանը, ազատվելով Վեհափառ Հայրապետի գավազանակրի պարտականություններից, մեկնել է ուսումը շարունակելու Իտալիայում:

Անանիա աբդ. Ծատուրյանը, ով ավարտել է ուսումնառությունն Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հայրապետական տնօրինությամբ նշանակվել է գավազանակիր:

Նժդեհ քհն. Քեշիշյանը ծառայության է կոչվել Բուլղարիայի հայոց թեմում՝ թեմական առաջնորդի իշխանության ներքո:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ...

«Որքան մեծ է տարածությունը հրամայողի եւ հպատակվողի միջեւ, այնքան առաջինի համար պակաս նշանակություն ունեն երկրորդի արյունն ու քրտինքը»:
Դենի Դիդրո



Հնագույն ժամանակներից մարդկությանը հուզել եւ մշտապես քննարկվել են պետությանը, իշխանությանն ու բռնությանը վերաբերող հիմնախնդիրները: Բազմաթիվ իմաստասերներ, քաղաքագետներ, գրողներ, հրապարակախոսներ անդրադարձել են այս հարցերին՝ տարբեր սահմանումներ կամ բնորոշումներ առաջադրելով: Այսպես՝ Պլատոնը (Ք. ա. 427-347 թթ.) իդեալական պետությունը հակադրում է իրականում գոյություն ունեցող պետություններին: Նշանավոր փիլիսոփան վերջիններս դասակարգում է ըստ կառավարման չորս ձեւի՝ թիմոկրատիա (փառասերների իշխանություն), օլիգարխիա (փոքրամասնություն կազմող հարուստների իշխանություն), դեմոկրատիա (ձեւականորեն ազատ քաղաքացիների իշխանություն) եւ բռնապետություն, որի առաջնորդին «աճեցնում» է ինքը՝ ժողովուրդը: Պլատոնի քաղաքագիտական բնույթի աշխատություններում կարեւորվում է երկրի ապագայի կերտմանը մասնակից լինելը. «Քաղաքականությանը մասնակցելու մերժման պատիժն այն է, որ, ի վերջո, ձեզ կղեկավարի ձեր ենթական»: Իշխանություն-ժողովուրդ հարաբերություններին անդրադարձներն անհաշվելի են. օրինակ՝ անգլիացի փիլիսոփա, պատմաբան, քաղաքական գործիչ Ֆրենսիս Բեկոնը (1561-1626 թթ.) նկատում է. «Իշխելով ուրիշներին՝ մարդը կորցնում է սեփական ազատությունը»: Ռուս գրական քննադատ, փիլիսոփա, հրապարակախոս Դմիտրի Պիսարեւը (1840-1868 թթ.) անարժան իշխանավորների մասին գրում է. «Թույլ մարդիկ, որոնք վերեւում են հայտնվում, հեշտությամբ չարագործներ են դառնում»: Որպես այս մտքի շարունակություն՝ մեջբերենք անգլիացի գրող, գիտնական, հասարակական գործիչ եւ գրական քննադատ Չարլզ Սնոուի (1905-1980 թթ.) տեսակետը՝ «Իրենց ձեռքում իշխանություն պահողները մինչեւ վերջին րոպեն չեն հավատում, որ կարող են կորցնել այն»: Չլինելով քաղաքագետ՝ չներխուժենք մեզ չվերաբերող ոլորտ, այլ փորձենք ներկայացնել իշխանության մասին աստվածաշնչյան ընկալումներն ու աստվածաբանական մեկնաբանությունները:

Բանական գոյությունը ենթադրում է հաղորդակցություն, հետեւաբար նաեւ՝ փոխազդելու, տնօրինելու, իշխելու եւ կառավարելու կարողություն: Այս իմաստով ցանկացած գոյի կամ գոյության, ուստի եւ իշխանության սկզբնաղբյուրը, անշուշտ, բացարձակ Գոյն է: Արարված լինելով Արարչի նմանությամբ ու պատկերով՝ մարդը, փաստորեն, Նրանից ստանում է որոշակի իշխանություն, իշխելու հնարավորություն: Այս է հաստատում նաեւ Ծննդոց գիրքը. «Աճեցեք, բազմացեք, լցրեք երկիրը, տիրեցեք դրան, իշխեցեք...» (Ա 28):

Հիշենք նաեւ, թե ինչպես էր սատանան փորձում անապատում գայթակղել Քրիստոսին՝ Նրան խոստանալով աշխարհի բոլոր թագավորություններն ու փառքը (Ղուկ. Դ 5-8): Հիսուս պատասխանում է նրան. «Գրված է. «Քո Տեր Աստծուն պիտի երկրպագես եւ Նրան միայն պիտի պաշտես» (Ղուկ. Դ 8): Հետագայում եւս Աստծո Որդին բազմիցս մերժում է աշխարհիկ տիրակալ կամ թագավոր դառնալու առաջարկները, ինչպես օրինակ՝ հացի բազմացումից հետո՝ «Երբ Հիսուս իմացավ, որ գալու են իրեն բռնել տանելու, որպեսզի իրեն թագավոր անեն, դարձյալ միայնակ դեպի լեռը գնաց» (Հովհ. Զ 15), Երուսաղեմ մուտքի ժամանակ, երբ մարդիկ Նրան ընդունում ու փառաբանում են որպես արքայի (Հովհ. ԺԲ 19):

Միեւնույն ժամանակ սուրբգրային բազմաթիվ հատվածների վերլուծությունից հստակ երեւում է, որ իշխանությունն անհրաժեշտ է մարդկային հասարակության կենսագործունեության ու ղեկավարման համար:

Աստվածաշնչում «իշխանություն» բառով նկատի են առնվում մի խումբ մարդիկ կամ հաստատություններ, որոնք իրականացնում են վարչական գործունեություն, վերահսկողություն կամ ղեկավարում (հմմտ. Ղուկ. ԺԲ 11, Հռոմ. ԺԳ 1-3, Ա Տիմ. Բ 2, Տիտ. Գ 1):

Ըստ Սուրբ Գրքի՝ ղեկավարներն ու իշխանությունները աշխարհի Տիրոջ կողմից են հաստատվում. «...որովհետեւ Նրանն է իմաստությունը, հանճարը եւ զորությունը: Նա է, որ փոփոխում է ժամերն ու ժամանակները: Թագավորներ է կարգում եւ փոփոխում» (Դան. Բ 20-21): Այս միտքը հաստատող աստվածաշնչյան տեղիները բազմաթիվ են (հմմտ. Սաղմ. ՃԼԶ 3, ՀԶ 12, ՃԺԸ 9 եւ այլն):

Պողոս առաքյալի խոսքը՝ «Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հպատակի նրան. քանզի չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. եւ եղած իշխանությունները Աստծուց են կարգված...» (Հռոմ. ԺԳ 1), հաճախ է թյուրըմբռնվում եւ սխալ մեկնաբանվում, քանզի կտրվում, առանձնացվում է հետագա շարակարգից (կոնտեքստից): Այստեղ առաքյալի նպատակն ամենեւին էլ իշխանությունների աստվածային ծագումը շեշտադրելը եւ իշխանավորների գործողությունները արդարացնելը չէ, այլ՝ հասարակության կյանքում վերջիններիս դերակատարման, գործառույթների ու պարտականությունների ընդգծումը. «... քանի որ իշխանավորները վախ չեն ազդում բարի գործերի համար, այլ՝ չար գործերի: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից. բարին գործիր եւ նրանից գովասանք կստանաս, որովհետեւ նա Աստծու պաշտոնյա է քեզ՝ բարի գործերի համար» (Հռոմ. ԺԳ 3-4): Այսինքն՝ պաշտոնյան՝ իշխանավորն ինքը, բարին պետք է գործի, Աստծո ճանապարհներով ընթանա, Նրա խոսքին հետեւի, պատվիրանները կատարի՝ կենդանի օրինակ ծառայելով իր ենթակաների համար: Չես կարող որեւէ մեկից պահանջել հնազանդություն, եթե ինքդ հնազանդ չես քո Տիրոջը, խոնարհություն, եթե դու ցոփ ու շվայտ կյանք ես վարում, բարոյական արժեքներ, եթե անառակության մեջ ես թաթախված, ազնվություն, եթե ինքդ խաբեբա եւ մեղսագործ ես, արդարամտություն, եթե գող ու թալանչի ես...

Տիրոջ առաքյալի վերոնշյալ խոսքերը չպետք է ընկալել որպես անվերապահ հնազանդության կոչ. ինչպե՞ս կարող են մարդիկ ենթարկվել աշխարհիկ իշխանությանը, եթե վերջինիս բոլոր գործողություններն ու սահմանած օրենքները խիստ հակասում են բարձրագույն Օրենսդրի պատվիրաններին:

Խնդրահարույց այս հատվածին անդրադարձել է նաեւ Հովհան Ոսկեբերանը Հռոմեացիներին ուղղված թղթի իր մեկնության մեջ. Եկեղեցու նշանավոր հայրն իրավամբ նկատում է, որ առաքյալի խոսքն այստեղ ոչ թե առանձին տիրակալներին, կառավարիչներին կամ ղեկավարներին է վերաբերում, այլ ընդհանրական իմաստով իշխանությանը: Իշխանության առկայությունը, երբ ոմանք ղեկավարում կամ կառավարում են, իսկ մյուսները՝ ենթարկվում, պատահական կամ ինքնաբուխ երեւույթ չէ, այլ բացարձակ Իմաստության կամքով հաստատված իրողություն:

Հիշենք, թե ինչպես էր իր իշխանությամբ մեծամտանում Պիղատոսը՝ Քրիստոսին ասելով. «Ինձ հետ չե՞ս խոսում, չգիտե՞ս, որ իշխանություն ունեմ քեզ խաչը հանելու...» (Հովհ. ԺԹ 10): Աստծո Որդին նրան պատասխանում է. «Դու ինձ վրա ոչ մի իշխանություն էլ չէիր ունենա, եթե քեզ ի վերուստ տրված չլիներ...» (Հովհ. ԺԹ 11): Եվ իրապես էլ, որպես քրիստոնյա, պետք է ընդունենք, որ բոլոր արքաները, կայսրերը եւ տիրակալները, իսկ այսօր նաեւ երկրների նախագահներն ու ղեկավարները իշխելու, կառավարելու հնարավորություն են ստանում Աստծուց. մեր Հայրն է թույլ տալիս նրանց իշխել, առաջնորդել մյուսներին:

Շարունակությունը՝ էջ 8



ԺԱՆՍԵՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՎԱՆԴԸ

Ս փյուռքահայ նկարչական արվեստի մեջ անգնահատելի ավանդ է ներդրել Հովհաննես Սեմերջյանը, ում աշխարհը ճանաչում է Ժանսեմ կեղծանունով: Լինելով մեծ տաղանդի տեր՝ Ժանսեմն ունի իր ուրույն նկարչական ձեռագիրը: Նրա կտավներից շատերը ցուցադրված են աշխարհի հայտնի թանգարաններում, ինչպես նաեւ անհատական հավաքածուներում:

Հովհաննես Սեմերջյանը ծնվել է 1920 թ. Թուրքիայի Սելեզ քաղաքում, մետաքսագործի ընտանիքում: Հայոց կոտորածների շրջանում Սեմերջյանների ընտանիքը գաղթում է Հունաստան: Ապագա նկարչի ընտանիքն ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ, ինչի պատճառով հայրը հիվանդանում եւ մահանում է: Այդ ժամանակ Հովհաննեսն իր վրա է վերցնում ընտանիքի սոցիալական բեռը: Նա աշխատում է որպես արհեստավորի օգնական՝ ընտանիքի ապրուստը վաստակելու համար: Սեմերջյանների ընտանիքի ձախողումներն այսքանով չեն սահմանափակվում. կոտրվում է Հովհաննեսի ոտքը, եւ նրա մայրը, որդու բուժումը կազմակերպելու նպատակով, ընտանիքը տեղափոխում է Ֆրանսիա: Սեմերջյանները բնակություն են հաստատում Փարիզի Իսի լե Մուլինո արվարձանում: Բարեբախտաբար ֆրանսիացի բժիշկները կարողանում են բուժել տղայի ոտքը եւ կանխում անդամահատումը:

Դեռեւս մանկության տարիներից Հովհաննեսին հետապնդում էին անցյալի ծանր հիշողությունները: Նրան համակել էին միայնության ու հոգեկան ցավի զգացողությունները, եւ սա զգացվում է նրա նկարներում: Վերջիններս հագեցած են սառը գույներով ու երանգներով: «Իմ հասակակից երեխաները դաժան խաղեր էին խաղում եւ հաճախ ծեծում էին իրար, իսկ ես միշտ քաշվում էի մի անկյուն, նկարում էի կամ էլ գիրք կարդում: Մորս խոսքերով՝ ես խաղաղ երեխա եմ եղել: Նա ասում էր, որ ես երբեք չէի ծիծաղում ծննդավայրս լքելուց հետո: Ես հիշում եմ ծխի հոտը, հիշում եմ, թե ինչպես էին մարդիկ նետվում ջուրը, որպեսզի փրկվեն: Այնուհետեւ նրանք նավակներով հասնում էին իրենց հարազատ վայրերը: Մենք հույների հետ միասին ճողոպրեցինք դեպի Հունաստանի Սալոնիկի քաղաքը: Ես հիշում եմ կանաչագույն ծովը եւ երկինքը, որը կարմիր երանգ էր ստացել: Մարդկանց ձեռքերը կախված էին նավակներից դուրս, իսկ շուրջբոլորը արյուն էր ու հուր: Այս տեսարանները հոգեկան ցավ էին պատճառել ինձ, սակայն մարդիկ, առանց խոր մտածելու, ասում էին, որ ես պարզապես թախծոտ տղա եմ»,- ահավասիկ մեկ դրվագ Ժանսեմի հուշերից:

Հովհաննեսի տրամադրությունը որոշակիորեն փոխվեց, երբ նա տեղափոխվեց Ֆրանսիա: Նկարչի խոսքերով՝ շփումը ֆրանսիացիների հետ եւ սերը դեպի գեղանկարչությունը վերափոխեցին իր կյանքը: Նա լիովին այլ մարդ դարձավ: Իր հուշերում Ժանսեմը գրում է հետեւյալը. «Ի տարբերություն այլ երեխաների, ովքեր կորցնում են իրենց հետաքրքրությունը նկարչության հանդեպ 11-12 տարեկանում, ես շարունակեցի ստեղծագործել:

Շարունակությունը՝ էջ 7

ՊԵՐՃ ՉԵՅԹՈՒՆՑՅԱՆ

Վերջին արեւագալը



Գրական բարձր արժեքները ծնվում են ժամանակի պահանջարկից, ժամանակի պարտադրանքով: Պերճ Չեյթունցյանի «Վերջին արեւագալը» երկը մի գործ է, որ ծնվել է հայ ժողովրդի ազատաբաղձ ձգտումների հզոր պոռթկման՝ Արցախյան շարժման օրերին: «Զոհրապը հիմա նման էր մի մարդու, որ վերջին ուժերը հավաքած, մագլցում էր լեռը, գագաթը մոտ է, մոտ, ահա թե որքան մոտ է, բայց հանկարծ նրա փեշից կոպտորեն բռնում են եւ գլորում դեպի ստորոտը: Գոնե սիզիֆյան տանջանքի հեռանկար լիներ: Գոնե տանջանքի անիմաստությունը լիներ: Չէ, այդ էլ չկար: Այլեւս չի մագլցի այդ լեռը: Ոչ ոք չի մագլցի...» (Պերճ Չեյթունցյան, Վերջին արեւագալը, Եր., 1989): Հենց այսպես է սկսվում վեպը, որտեղ պատկերվել է հայ «Նորավեպի իշխան» հռչակված Գրիգոր Զոհրապի կյանքի՝ 1880-ականներից մինչեւ 1915 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածը:

Հեղինակն իր երկն անվանել է վեպ, սակայն որոշ հատկանիշներով վեպերը տարբերվում են միմյանցից: Հենց իր՝ Պ. Չեյթունցյանի վիպական կտավները՝ «Մեզանից հետո», «Կլոդ Ռոբերտ Իզերլի», «Արշակ Երկրորդ», տարբեր են ոչ միայն թեմատիկայով, այլեւ ձեւակառուցվածքային յուրահատկություններով, ժանրային նկարագրով: «Վերջին արեւագալը» ծավալուն երկում արձակագիը մեկտեղ շաղել է եւ պատմակենսագրական վեպի, եւ վեպ-ժամանակագրության, եւ քաղաքական վեպի բաղադրիչ որակները՝ ստեղծելով ըստ էության բարդ, միանգամայն ինքնատիպ եւ գեղարվեստական առումով բարձրարժեք գործ: Սա արձակագրի նոր վերելքն էր, արդի հայ վիպասանության մնայուն երկերից մեկը:

Անշուշտ, Գր. Զոհրապի կյանքի ու գործունեության վիպականացումն առաջին հայացքից ենթադրում է պատմակենսագրական ժանրի նախապատվություն: Ու դա համեմատաբար հեշտ մարսելի կլիներ: Սակայն Պ. Չեյթունցյանը գնացել է դժվարին ճանապարհով. նա ներդաշնակել է վեպի քաղաքական ու պատմակենսագրական ժանրաձեւերը: Ավելին՝ տեղ-տեղ էլ դիմել վեպ-ժամանակագրություն տեսակին եւ արդյունքում ստացել է վիպական ինքնատիպ մի որակ, որն ուղենշային երեւույթ է՝ հայ արդի արձակագրության զարգացման միտումների առումով:

Երբ քննության ենք առնում «Վերջին արեւագալը» վեպում Զոհրապի կերպարը, տեսնում ենք, որ հեղինակն իր ստեղծագործության գլխավոր հերոսին ներկայացնում է ոչ միայն ժամանակին հատուկ քաղաքական գործչի բնավորությամբ ու վարքագծով, այլեւ նրա կերպարի մեջ ներառում է մարդկային շատ հատկանիշներ եւ հոգեվիճակներ, որոնք էլ վեպն ավելի գեղեցիկ, հարուստ եւ ամբողջական են դարձնում: Թվենք դրանցից մի քանիսը եւ փորձենք ուսումնասիրել դրանք: Հատկանշական են, օրինակ, Զոհրապը որպես հայր եւ ամուսին, ազգային-քաղաքական գործիչ, գրող-հրապարախոս եւ վերջապես՝ գաղափարական ընկեր: Վեպում, բնական է, արծարծված են հայերիս համար շատ ծանր ժամանակաշրջանի դեպքեր: Զոհրապը, լինելով բանիմաց, խելացի եւ քաղաքական գործում հմտացած անհատ, հասկանում էր սպասվելիք աղետի ողբերգական հետեւանքները: Գրողը դիպուկ է պատկերել Զոհրապի հոգեվիճակը: Բնորոշ է վեպի հետեւյալ դրվագը: Երբ 1914 թ. հունիսի 28-ին սպանում են Ֆրանց Ֆերդինանդին, եւ դա էլ պատրվակ է դառնում Առաջին համաշխարհային պատերազմի, Զոհրապը լավ հասկանում է, որ այս առիթը թուրքական իշխանությունները պիտի օգտագործեն իրենց մութ նպատակներն իրականացնելու համար: Նա այդ օրերին հաճախ էր ծանր աշխատանքից ու դառը մտորումներից հետո լիցքաթափվելու միջոցներ փնտրում: Մի օր էլ նա, երբ այնտեղ հավաքված էին հայ մշակույթի ծանոթ գործիչներ, կոչ է անում փախչելով փրկվել, ապա դուրս է գալիս եւ արագ հեռանում: Գինետան աշխատակիցը, ով լավ էր ճանաչում Զոհրապին, դուրս է գալիս նրա հետեւից եւ ձայն տալով հարցնում, թե ինչու ինքը չի հեռանում, Զոհրապը նրան պատասխանում է, որ իր տեղը Պոլսում է:

Այս դրվագում երեւում է հերոսի սերն ու անհանգստությունը իր այն ընկերների նկատմամբ, որոնք կարող էին իր ժողովրդի համար դառնալ գոնե գաղափարական առաջնորդներ:

Կասկած չի կարող լինել, որ հայ հանրությունը ծանոթ է Զոհրապ գրողին: Նրա ստեղծագործությունները մեծ տեղ են գրավում հայ գրականության մեջ: Վեպում ներկայացվում է Զոհրապ գրողը եւ հրապարախոսը, ով այդ ժամանակ ստեղծագործական ճգնաժամի մեջ էր: «Վերջին արեւագալում» պատկերվում է, թե ինչպես է նա ժամերով նստում գրասեղանի առաջ եւ մի տող անգամ չի կարողանում գրել, սակայն հրապարախոսական խոսքը երբեմն-երբեմն պոռթկում է, եւ շատ հզոր հոդվածներ են ստացվում. այդ պահերին Զոհրապը գիտակցում է, որ իր վերջին ստեղծագործությունն է գրում:

Շատ ավելի խոր է Զոհրապ քաղաքական գործչի կերպարը, ով մերթ ուրախանում է հաջողություններից եւ մերթ հայտնվում ընկճախտային ծանր վիճակներում՝ թուրքական իշխանությունների աննկարագրելի դաժանություններից: Այս լարված իրադրությունները մեծապես ազդել էին նաեւ ընտանեկան հարաբերությունների վրա:

Չեյթունցյանը դիպուկ նկարագրել է այն լուռ ցավերը, որ ապրում էր մեծ արվեստագետը՝ հայ ժողովրդի համար կործանարար այդ օրերին: Վեպում նկարագրվում է, թե ինչպես է Զոհրապը գալիս տուն, անտարբեր անցնում մեծ սենյակով, նստում գրասեղանի առաջ եւ լուռ տառապում: Կինն ու տղան անգամ չէին համարձակվում մի ձայն հանել: Եվ մի օր էլ նրանք լուռ հեռանում են տնից: Թերեւս կարելի է մտածել, որ Զոհրապն իր ընտանիքին նվիրված չէր, բայց ամենեւին էլ այդպես չէ, քանի որ նա իր մեծ ընտանիքի՝ հայրենիքի ցավից հասել էր անհավասարակշռության, սակայն այդ վիճակով էլ նա ծովահայաց պատուհանից անդադար հետեւում էր հեռացող կնոջն ու տղային՝ մինչեւ նրանք կկորչեին ամբոխի մեջ:

Ինչպես տեսանք, Պ. Չեյթունցյանը վեպում կերպավորել է հզոր եւ միեւնույն ժամանակ փխրուն մարդու: Հայ նշանավոր գրողների կյանքին նվիրված ստեղծագործություններում (Բակունց՝ Խաչատուր Աբովյան, Զարզանդ Դարյան՝ Սայաթ-Նովա, Կարեն Սիմոնյան՝ Միքայել Նալբանդյան) հեղինակներն այս կամ այն չափով անդրադարձել են արտացոլվող ժամանակաշրջանների քաղաքական իրադարձություններին:

Այս առումով, հատկապես, առանձնակի է Պ. Չեյթունցյանի մտահղացումը. Արցախի բռնակցումը Ադրբեջանին մեր կորուստն է, ինչպես որ մեր ամենամեծ կորուստն է 1915-ի եղեռնը՝ ամբողջ Արեւմտահայաստանի հայաթափումը: Իսկ Պ. Չեյթունցյանը Գրիգոր Զոհրապի կենսապատումով արծարծում է հենց այդ՝ մեր ամենամեծ կորստի թեման:

Չեյթունցյանի խիզախումն արժեքավորվում է կրկնակի, քանի որ ժանրի զարգացման ոլորտում գեղարվեստական լուրջ ներդրում լինելով հանդերձ՝ «Վերջին արեւագալը» ընդգրկում է մի երկարատեւ պատմաշրջանի՝ 20-րդ դարի հայ հասարակական-քաղաքական, մարդկային ու բարոյական նշանակալից իրադարձությունները, հյուսում դրանց գեղարվեստական տարեգրությունը:

Կառուցվածքային այդ ձեւը վեպին յուրատեսակ դրամատիզմ է հաղորդել՝ ազատելով դեպքերի երկարաձիգ շղթայի կուտակումներից եւ միաժամանակ պատմական զարգացման ողջ ընթացքին տալով տրամաբանական ու ճշմարտացի հոլովումի ընդհանրություն: Ասել է թե՝ նյութի տարողունակությունը, երկարատեւ ժամանակային թվամիջոցը, պատմական բուռն ու հարուստ իրադարձությունները, բազմաքանակ հերոսների խայտաբղետությունն ու նրանց կապերի բարդությունը կենտրոնացնելու, ավելի «տեսանելի» դարձնելու եւ վիպական կուռ համակարգի մեջ դնելու համար Չեյթունցյանի ընտրած կառուցվածքային ձեւը միանգամայն հաջող է, իր տեսակի մեջ՝ ինքնատիպ:

Վեպը կազմված է 18 մասից կամ բաժնից, որոնք վերնագրված են 1915 կամ «հետադարձ հայացք» խորագրով, որոնք իրենց մեջ ամբողջացնում են մի կարեւոր եւ նշանակալից իրադարձություն:

Ըստ որում՝ անկարեւոր չէ նշել, որ վեպում «հետադարձ հայացքները», զբաղեցնելով ոչ քիչ տարածություն (եթե ոչ կեսը, համենայն դեպս՝ մեկ երրորդից ավելին), չեն դառնում հուշապատումներ կամ սոսկական վերհուշային նկարագրություններ: Դրանք կենդանի գործողություններ են, հավաստի հանգամանքներ՝ իրական հերոսներով՝ խտացված իրենց ժամանակի ու միջավայրի համապատկերում:

Այնուհետեւ, ամեն անգամ դիմելով «հետադարձ հայացքի», վիպասանը խզում չի ստեղծում տարբեր ժամանակների միջեւ, ինչ-որ արհեստական կամ միմյանցից չինական պարսպով առանձնացված իրականություններ չի ներկայացնում:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ էջ 6

Ինձ համար կտավը սպիտակ մակերես է, որի վրա կարելի է արտահայտել ողջ հոգեվիճակը ու միեւնույն ժամանակ լինել ազատ սեփական մտքերից»:

Մոնպարնասի ազատ ակադեմիան, որտեղ նա ուսանում էր ընդհուպ մինչեւ 1936 թ., դարձավ նրա առաջին պրոֆեսիոնալ դպրոցը: Երկու տարի անց Հովհաննեսն ավարտեց Փարիզի դեկորատիվ արվեստի բարձրագույն դպրոցը: Նա մի քանի տարի շարունակ կատարելագործում էր իր արվեստը Սաբատյեի արվեստանոցում:

«Երբեմն ինձ թվում էր, որ մարդ պետք է շատ միամիտ լինի, որ ամբողջ կյանքը նստի կտավի առջեւ, ներկերով պատի այն՝ փորձելով ինչ-որ իմաստ արտահայտել: Բայց ես սիրում եմ այդ գործը, եւ կարծես թե ինձ ինչ-որ բան հաջողվում է»,- համեստորեն ասում է աշխարհահռչակ արվեստագետը:

1944 թ. կազմակերպվեց Ժանսեմի առաջին ցուցահանդեսը, որը կարճ ժամանակում նրան մեծ ճանաչում բերեց: Իսկ 50-ական թվականների սկզբում նկարիչը մի շարք մրցանակների արժանացավ Ֆրանսիայում եւ եվրոպական այլ երկրներում: Որոշ ժամանակ անց նա ընտրվում է երիտասարդ նկարիչների ցուցասրահի նախագահի պաշտոնում: Ժանսեմն անհատական ցուցահանդեսներ է կազմակերպել աշխարհի մի շարք քաղաքներում՝ մասնավորապես Փարիզում, Նյու Յորքում, Չիկագոյում, Լոնդոնում, Տոկիոյում, Հռոմում, Բրյուսելում, Լոզանում, Բեյրութում եւ այլուր: Շնորհիվ իր բազմաթիվ ցուցահանդեսների՝ Ժանսեմը հայտնի դարձավ ամենուր:

Սեմերջյանն ունի մի շարք գործեր՝ նվիրված դիմակահանդեսներին, թատերական գործողություններին ու դերասաններին, ում նա ժողովում է վենետիկյան միջավայրի մեջ:

«Մի ժամանակ ես շատ էի սիրում ժամանակս անցկացնել տան պատերից դուրս: 60-ական թվականների կեսերին Ֆրանսիայում համընդհանուր խելահեղության մթնոլորտ էր տիրում, եւ կյանքն ինձ համար կարծես դիմակահանդես լիներ»,- ասում էր Ժանսեմը: Բայց եւ այնպես, նույնիսկ այդ դիմակահանդես-նկարներում երեւում են կյանքի դրամատիկ, իսկ երբեմն էլ ողբերգական կողմերը: Ժանսեմի կտավներում պատկերված մարդկանց աչքերը լի են անմոռանալի թախծով: Դրանցում հոգեկան տառապանք է զգացվում: Սա անշուշտ կապված է նկարչի մանկական հիշողությունների հետ:

Շարունակությունը՝ էջ 8

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ...

Սկիզբը՝ էջ 6

Միեւնույն ժամանակ պետք է հստակ ընկալել՝ ա. որեւէ թագավոր, իշխանավոր կամ առաջնորդ երբեւէ չի կարող տիեզերքի Տիրակալից վեր ու հզոր լինել. Աստված է ամենայնի եւ բոլորի Տերը, բարձրագույն Օրենսդիրն ու իշխանություն շնորհողը, բ. Աստված, արքաներին, տիրակալներին կամ ղեկավարներին իշխանություն տալով, նաեւ հնարավորություն է ընձեռում իրենց տրված ազատ կամքով ընտրելու, որոշելու ղեկավարման ձեւն ու եղանակը. թե ինչպես են մարդիկ տնօրինում իրենց շնորհված իշխանությունը, դա նրանց ընտրությունը եւ որոշումն է, ոչ թե Աստծո, գ. այն, որ երկնային Հայրը որեւէ մեկին իշխանություն է պարգեւում, ամենեւին էլ չի նշանակում, թե հավանություն է տալիս կամ խրախուսում է նրա գործունեությունը: Ահա այս երրորդ կետում է ակնհայտ դառնում հակասականությունը: Այս պարագայում չենք կարող անտեսել մարդկային գործոնը. մարդկային սխալականությունն ու անկատարությունը, մարդկային փոխհարաբերությունները անխուսափելիորեն որոշակի դերակատարում են ունենում իշխանության իրացման եւ իրականացման գործընթացում: Այսպիսով, կրկին հակադրվում են Արարչի կատարելությունն ու բացարձակ իմաստությունը եւ արարածի անկատարությունն ու անխոհեմությունը: Այս մասին է խոսում նաեւ Քրիստոս՝ Իր աշակերտներին պատգամելով հասնել կատարելության (հմմտ. Մատթ. Ե 48):

Իշխելու, տիրելու հիվանդագին մոլուցքը, իշխանության չարաշահումը արատավորում եւ խեղում են մարդու մեջ աստվածային պատկերը՝ նրան դարձնելով գայթակղիչի՝ չարի հետեւորդ: Այս իմաստով է Աստծո Որդին սատանային անվանում «ողջ աշխարհի իշխան», որը թեեւ փորձում է իշխել (հմմտ. Հովհ. ԺԴ 30), սակայն գահընկեց է արվում եւ արտաքսվում է (հմմտ. Հովհ. ԺԲ 31):

Պատմության մեջ բազմաթիվ են այն դեպքերը, երբ մարդիկ, տիրող իշխանության պատճառով, ըմբոստանում են Աստծո դեմ, Նրան մեղադրում անարդարության մեջ... Նրանք տրտնջում եւ բողոքում են, որ տառապում են այդ իշխանության ձեռքում, մտածում, թե դա աստվածային պատիժ է... Սակայն այս պարագայում հստակ պետք է ընկալել՝ այն, ինչ Աստված Իր ամենազորությամբ իրականացնում է երկնքում եւ երկրի վրա, Նրա փրկագործության մի հատվածը, մասնիկն է... Գուցե ասվածը խիստ հակասական է, սակայն ունի իր հիմնավորումը: Այսպես՝ ժամանակ առ ժամանակ մարդը (նաեւ հասարակություններն ու ժողովուրդները) հեռանում է Արարչից. սա բնական է եւ բնորոշ մարդկային բնությանը... Սովորաբար մարդը մոռանում է Աստծուն, երբ ապրում է բարեկեցիկ, ապահով կյանքով՝ առանց չարչարանքի ու խնդիրների: Եվ միայն այն ժամանակ է մտածում կյանքի իմաստի եւ իր առաքելության մասին, փնտրում Տիրոջն ու խնդրում Նրա օգնությունը, երբ ենթարկվում է ծանր փորձությունների, հայտնվում անելանելի իրավիճակում կամ անասելի տառապում է. «Նայիր Աստծու գործերին. ո՞վ կարող է ուղղել այն, ինչ խախտել է Աստված: Քո լավ օրը բարիքների մեջ ապրիր, բայց հիշիր, որ վատ օր էլ կա...» (Ժող. Է 14-45): Այսպես է նաեւ հասարակությունների ու ժողովուրդների պարագայում: Մտաբերենք մեր պատմությունը. ե՞րբ ենք եղել առավել համախմբված, միասնական, աստվածավախ, համբերատար... Երբ տառապել ենք, կրել զրկանքներ, առերեսվել բնաջնջման եւ ձուլման վտանգին: Այո՛, արքաները, տիրակալներն ու իշխանությունները փոփոխվում են, փոխարինում իրար՝ ժողովրդի կյանքում ունենալով դրական կամ բացասական դերակատարում: Սա էլ Բարձրյալի կողմից Իր կամքը հայտնելու, որոշակի ճանապարհ նախանշելու, մարդկության մեջ փորձությունները հաղթահարելու ուժ եւ կարողություն ձեւավորելու միջոց է: Նշենք նաեւ, որ աստվածային տնօրինությունները, ուղիները, որոնց խորքային իմաստն ու նշանակությունը հաճախ անընկալելի եւ անհասանելի են մեր մարդկային բանականությանը, նպատակաուղղված են մարդուն, հասարակությանը, ժողովրդին մաքրագործելուն, հղկելուն եւ կատարելագործելուն: Հոգեւոր ու նյութական ճգնաժամից, փորձությունների ծանր ժամանակաշրջանից հետո մարդկային հասարակությունները, դուրս մղելով տարիների ընթացքում կուտակված բացասական ապրումներն ու ատելությունը, մաքրագործվում են, սրբագրում իրենց սխալները, դառնում նորի հանդեպ առավել ընկալունակ, փոփոխություններին պատրաստ, առավել հանդուրժող:

Իշխանությունը ծառայություն է, ոչ թե արտոնություն կամ «զենք», իսկ իշխանավորն Աստծո ծառան է երկրի վրա, Նրա կամքը կատարողը: Աստծո Որդու իշխանությունից առավել մեծ ու զորեղ իշխանություն որեւէ մեկը չի ունեցել եւ չի ունենալու (հմմտ. Մատթ. ԻԸ 18), սակայն Նա ասում է. «...մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու...» (Մատթ. Ի 28): Ի վերջո, բոլոր իշխանություններն էլ հաստատվում եւ փոփոխվում են Աստծո կամքով՝ ի լրումն ժամանակի՝ իրենց դրական կամ բացասական գործառույթն իրագործելով, քանզի «...ամեն բանի ժամանակը կա, եւ աշխարհում ամեն գործ ունի իր ժամանակը» (Ժող. Գ 1):

Սերն է հոգեւոր եւ աշխարհիկ իշխանության հաստատման միակ ճշմարիտ ուղին. սերը իր նմանի, սեփական ազգի, հայրենիքի, եկեղեցու, Տիրոջ հանդեպ, որպես սրբազան կանթեղ, լուսավորում է մարդու ճանապարհը, առաջնորդում նրան: Միայն սիրելով կարող ես սեր ստանալ, իշխել մարդկանց սրտերին, հոգուն, մտքին: Սերն է ծնում նվիրում, ինքնազոհողություն, խոնարհություն, համբերություն եւ հանդուրժողականություն. «Այն օրը, երբ սիրո ուժը կիշխի ուժի հանդեպ տածած սիրո վրա, աշխարհում խաղաղություն կտիրի» (Մահաթմա Գանդի):

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Պերճ ՉԵՅԹՈՒՆՑՅԱՆ

Վերջին արեւագալը

Սկիզբը՝ էջ 7

Մեր առջեւ իր ամբողջ հասակով վերհառնում է արեւմտյան իրականությունը՝ պատմագեղարվեստական այնպիսի լուսարձակով, որը միասնության մեջ է պատկերում կյանքը, ժամանակն ու պատմությունը, ժողովրդի ու բազմաթիվ անհատականությունների ճակատագրերը:

Ուստի նպատակահարմար ենք համարում վեպը քննության առնել քրոնոտոպային առանձնահատկությամբ: Տարածաժամանակային որոշակի սահմաններում, «Վերջին արեւագալի» քրոնոտոպը Զեյթունցյանի մեծագույն վարպետության կնիքն է կրում: Ամբողջ վեպը կառուցված է տարածաժամանակային նուրբ կապերով: Հետադարձ հայացքների սկզբունքով՝ վեպի քրոնոտոպը ձեւակերտվում է հիմնականում տուն-խմբագրատուն, ապա նաեւ կայարան, գինետուն շղթայում եւ A2B1C2D1 գենոտիպի բանաձեւով:

«Վերջին արեւագալը» վեպում քիչ չեն նաեւ այն էջերն ու հատվածները, որոնք ունեն հրապարակախոսական շունչ: Վեպում Պ. Զեյթունցյանը հրապարակագրի իր տաղանդը սրել է պանիսլամիզմի ու պանթուրքիզմի տխրահռչակ գաղափարախոսության եւ ռազմատենչ-զավթողական քաղաքականության անխնա մերկացման դրվագներում, լայն պարագծերով ցույց տվել նաեւ եվրոպական դիվանագիտության երկդիմությունը: Հատկապես թուրքական մեջլիսի անդամների, երիտթուրքերի պարագլուխների ու գերմանական դիվանագետների կապերն ու փոխառնչությունները վեպում պատկերված են հրապարակախոսության մեծ կրքով ու շիկացմամբ՝ ցայտուն երանգներ հավելելով մի շարք կերպարների բնավորություններին:

Ամենամեծ նվաճմանը Պ. Զեյթունցյանը, իհարկե, հասել է գլխավոր հերոսների հոգեբանական խտացումներով, արվեստի նուրբ միջոցների կիրառման շնորհիվ՝ գեղարվեստական-տիպական ընդհանրացումներով: Գրիգոր Զոհրապը՝ վեպի կենտրոնական դեմքը, կինը՝ Կլարան, թուրքական պառլամենտի անդամ, Զոհրապի մտերիմ ու գաղափարակից Վարդգեսը, երիտթուրքերի առաջնորդներից առանձնապես «անճոռնի արջ» Թալեաթը, «կուզիկ թխսամայր» Ջեմալ փաշան, Խալիլ բեյը, օտար դիվանագետներից Մորգենթաուն, Վագենհայմը եւ ուրիշներ կերտված են գեղարվեստական բազմազան հնարքներով եւ դարձել են շոշափելի անհատականություններ:

Զոհրապը 80-ականների հայտնի գործիչների՝ Արփիարյանի, Կամսարականի, Բաշալյանի, Հրանտ Ասատուրի եւ մյուսների միջավայրում, նրանց լուսավորական-դեմոկրատական գործունեությունը, ընտանիքում Զոհրապի անձնական կյանքի ու կենցաղավարության մանրամասները, թուրքական պառլամենտը եւ Զոհրապը, վերջինիս պայքարը ազգային-հասարակական շահերի պաշտպանության դիրքերում, Զոհրապի մարդկային-քաղաքացիական դիմանկարը,- այս եւ ուրիշ շատ խնդիրներ ու հանգամանքներ մարմնավորվել են վեպում գլխավոր հանգույցի եւ արծարծվող հիմնահարցերի լուսաբանության դիտանկյունից եւ մարմնավորվել գեղարվեստական բարձր մակարդակով:

Պ. Զեյթունցյանը հոգեբան արվեստագետ է ու պատահական կերպարներ եւ իրավիճակներ չի ստեղծում: Նրա երկխոսությունները զարմանալի խտություն, հագեցվածություն ունեն, աչքի են ընկնում ներքին դրամատիզմով: Կաշառում է վիպասանի խոսքի լարվածությունը: Իսկ հերոսների փոխհարաբերությունների հասարակական-մարդկային բովանդակությունը, կարճ կամ երկար զրույցների իմաստային խորքը, մենախոսությունների փիլիսոփայական շերտերի բազմագունությունը, վիպական բարդ կառույցի մեջ գեղարվեստական ամենատարբեր հնարանքների փայլուն մուծումները հաստատում են Պ. Զեյթունցյանի անուրանալի վարպետությունը:

Գրողի ու նյութի «մերձեցումը» գեղարվեստում անչափ էական է: Պարզ է՝ խոսքը ճշմարիտ գրողի մասին է, քանի որ, հակառակ դեպքում, առհասարակ ոչինչ չի կարող կայանալ: «Վերջին արեւագալը» վեպում քիչ է ասել, թե տեղի է ունեցել այդ «մերձեցումը»: Ուղղակի տեղի է ունեցել մի «հարազատ հանդիպում», խիստ սպասվող, այնքան ցանկալի հանդիպում, որի արդյունքը, անպայման, պետք է արգասավորվեր նման մի երկի գեղեցիկ ծնունդով: Պ. Զեյթունցյանը քաջ գիտեր արեւմտահայ ամբողջ գրականությունը, դարասկզբի արձակը եւ պոեզիան: Ոչ միայն Զոհրապի նովելներից ու բանաստեղծություններից քաղված հատվածները, այլեւ Վարուժանից, Սիամանթոյից եւ արեւմտահայ մյուս հեղինակներից բերված տողերն ու մտքերը ասես արյունով գրված, արյունով ցողված հնչում են վեպի համապատասխան էջերում այնքան տեղին, կարծես ստեղծված են հենց այդ նպատակով, հենց այդ դրվագների համար: Սա արդեն գրողի բախտավորությունն է: Իսկ առանց նյութի «հարազատության», առանց ժամանակի ու միջավայրի եւ իրական-պատմական հերոսների անթերի ճանաչողության անկարելի էր հասնել այդպիսի արդյունքի:

Պ. Զեյթունցյանի «Վերջին արեւագալը» վեպն այսօր հայրենասիրության պայծառ դասեր է տալիս: Սովորեցնում է ապրել հավատով ու արժանապատիվ: Այնպես, ինչպես կային, ինչպես մաքառեցին ու նահատակվեցին վեպի հերոսները:

Սամվել ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԺԱՆՍԵՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՎԱՆԴԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սկիզբը՝ էջ 6-7

Գուցե սա է պատճառը, որ ֆրանսիացի արվեստի տեսաբանները հայազգի արվեստագետին անվանում էին «մերժվածների նկարիչ»:

Ժանսեմն առաջին անգամ Հայաստան է այցելում դեռեւս խորհրդային տարիներին՝ 1973 թ.: Հայրենյաց երկիրը ոգեշնչեց արվեստագետին, եւ նա նկարների մի ամբողջական շարք ստեղծեց: Դրանցից էին «Երկնագույն ցեղասպանություն», «Դրվագ կոտորածներից», «Փախստականներ», «Տխրություն», «Բռնություն» եւ այլ ստեղծագործություններ: Այս նկարների շնորհիվ արվեստագետը մտովին կրկին ու կրկին վերադառնում է իր համար ծանր ժամանակները: Ի վերջո Ժանսեմը 34 նկարից կազմված մի ողջ շարք է ստեղծում, որը կոչվում է «Ցեղասպանություն»: 2001 թ. ֆրանսահայ նկարիչն այցելում է Հայաստան եւ վերը նշված շարքի բոլոր 34 նկարները նվիրաբերում Հայոց ցեղասպանության թանգարանին՝ իբրեւ հարգանքի տուրք եղեռնի զոհերին:

Մի անգամ Ժանսեմն ասել է հետեւյալը. «Չափազանց բարդ է արվեստի միջոցով արտահայտել ազգային ողբերգությունը: Մի քանի տարի շարունակ ես իմ միջով եմ անցկացրել անցյալի ողջ ողբերգությունը, երկար-բարակ մտորել եւ միայն դրանից հետո եմ վճռել սկսել ցեղասպանությանը նվիրված կտավների շարքը: Եղեռնի թեման մի խնդիր է, որի մասին ես մտածում եմ մինչ այժմ»:

Ժանսեմն իր մահկանացուն կնքեց 2013 թ. օգոստոսի 27-ին: Մահանալուց առաջ նկարիչը շարունակ հարցնում էր ինքն իրեն. ինչո՞ւ է ինքն իր ողջ կյանքն անցկացրել Ֆրանսիայում, եթե հոգով ու սրտով ֆրանսիացի չէ: Ակնհայտորեն սրա պատճառը Հայոց ցեղասպանությունն էր, որը վտարանդի դարձրեց թե՛ մեծանուն նկարչին եւ թե՛ տասնյակ հազարավոր այլ հայորդիների:

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 16.07.2018 թ.
Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ